



ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Համարվում է, որ Երկրի ձևավորումը տեղի էր ունենում երկնաքարերով հնդեոսիվ ռեֆակտման պայմաններում: 4-4.5 միլիարդ տարի առաջ արդեն պնդացած աստղակերպերի թիվը բավականին շատ էր, և դրանցից շատերի ուղեծրերը հասրում էին ձևավորվող Երկրի ուղեծիրը: Այդ ռեֆակտմանը տևեց մոտավորապես 100 միլիոն տարի, որից հետո աստղակերպերի քանակն էսպես նվազեց: Այդ ժամանակ Երկիրն արդեն ձեռք էր բերել իր ժամանակակից զանգվածը:

Առաջին անգամ երկրակեղևում առանձին սպերի գոյության մասին վարկած է առաջարկվել մոտավորապես 100 տարի առաջ՝ 1920-ականներին: Սակայն միայն 60-ականներից այդ վարկածը սկսեց քննարկվել լրջորեն: Այսօր պարզ է, որ երկրակեղևի սպերի միմյանց նկատմամբ շարժումների հեղևանքով են առաջանում երկրաշարժերը, որոնց ժամանակ հսկայական էներգիա է անջարվում, և տեղի են ունենում հսկայավերածությունները: Երկրի քարտեզի վրա տեղադրված կետերը, որոնք ցույց են տալիս երկրաշարժերի վերնակենտրոնները, ձգգրիպ գծում են այդ սպերի սահմանները:



Նկ. Պանգեա մայցամաքը, որի փրոտումից առաջացել են ժամանակակից ցամաքամասերը:

Ներկայումս մեր մոլորակում հայտնի է մոտ 500 ակտիվ հրաբուխ, որոնց մեծ մասը՝ 75 տոկոսը, գտնվում է, այսպես կոչված, «Խաղաղօվկիանոսյան կրակե օղակում»: Այդ օղակն արևմտյան կողմից ընդգրկում է Խաղաղ օվկիանոսը շրջափակող տարածքը՝ Ասիայի արևելյան ափերին մոտ գտնվող կղզիներով ու թերակղզիներով՝ Կամչատկա, Կորյիլներ, Սախալին, Ճապոնիա, Ինդոնեզիա, Նոր Գվինեա և այլն: Արևելքից դրա սահման է հանդիսանում Ամերիկա մայրցամաքի արևմտ-

յան ափն ամբողջ երկարությամբ: Պետք է նկատել, որ այս թվերի մեծ
ընդգրկված չեն ծովի խորքում փեղի ունեցող հրաբուխները: Ըստ գնա-
հարսականների միայն Խաղաղ օվկիանոսի կենտրոնական մասում
ստորջրյա հրաբուխների թիվը հասնում է 200 հազարի: Հաշվարկները
ցույց են փայլա, որ Երկրի մակերևույթ հասնող լավայի $\frac{3}{4}$ մասը մնում է
աննկատ: